Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել ծրագրի ղեկավար կազմակերպությանը հետևյալ հասցեով.

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ
ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 7, գրասենյակ 2
Հեռախոս՝ +37410 54 01 99
Էլ. փոստ՝ info@armla.am
Կայք՝ ccd.armla.am

Սույն հրապարակումն ստեղծվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում: Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիր

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ

COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

www ccd.armla.am

Մեր մասին

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է կոնսորցիումի կողմից, որը բաղկացած է վեց քաղաքացիական հասարակության կազմակերպությունից (ՔՀԿ).

- Իրավաբանների հայկական ասոցիացիա (ղեկավար կազմակերպություն),
- Մարդկային զարգացման միջազգային կենտրոն,
- ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա,
- Հայաստանի համայնքների միություն,
- Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ,
- «Ագորա Սենթրլ Յուրըփ» ՀԿ (գործում է Չեխիայի Հանրապետությունում):

Ծրագրի բյուջեն 2 222 256 եվրո է (222 256 եվրոն տրամադրվում է ծրագրի կոնսորցիումի կողմից): Ծրագրի տևողությունը 34 ամիս է (2016 թ. դեկտեմբեր-2019 թ. հոկտեմբեր):

Ծրագրի նպատակը

Այս նախաձեռնության ընդհանուր նպատակն այն է, որ Հայաստանում ապրող մարդիկ շոշափելի դրական փոփոխություններ զգան կրթության, արդարադատության, բիզնեսի, հանրային ֆինանսների կառավարման, մարդու իրավունքների, գյուղատնտեսության, տնտեսության, էներգետիկայի ոլորտներում և սոցիալական ոլորտում (հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառում): Թիրախային ոլորտների առաջնային խնդիրները կլուծվեն ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոալիցիաների կողմից, որոնք կառավարության հետ երկխոսություն կզարգացնեն և ազդեցություն կունենան Հայաստանում հանրային քաղաքականությունների վրա:

Գործողություններ

- ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոալիցիաների հետևյալ կարողությունների ուժեղացում՝ կոալիցիաների կառուցում, հանրային քաղաքականությունների մշակում, պետական բյուջեի հատկացումների և քաղաքականությունների իրականացման մշտադիտարկում, ՔՀԿ-Կառավարություն և ՔՀԿ-ՏԻՄ երկխոսության ձևավորում,

- ՔՀԿ-ների ինկուբատորների բացում Երևանում և Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի ու Սյունիքի մարզերում՝ ուժեղացնելու համար ՔՀԿ-ների և կոալիցիաների ներկայացուցիչների գործնական հմտությունները ծրագրի 9 թիրախային ոլորտներում,
- ՀԿ-ներին «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ նոր օրենքի շուրջ անվճար իրավաբանական խորհրդատվության և օգնության տրամադրում,
- Երկու տեսակի ենթադրամաշնորհների տրամադրում (33 ՔՀԿ-ներին և 18 ՔՀԿ-ների 9 կոալիցիաների)՝ ուղղված թիրախային ոլորտներում հրատապ խնդիրների լուծմանը և կոալիցիաների զարգացմանը,
- Կառավարության հետ կառուցողական և կայուն երկխոսության կառուցում և պահպանում, ոլորտային կոալիցիաների զարգացում,
- Համայնքային քննարկումների և փորձագիտական աշխատաժողովների անցկացում՝ ամենահրատապ խնդիրների շուրջ բաց և արդյունավետ քննարկումներ զարգացնելու և դրանց լուծման սցենարներ մշակելու համար,
- 9 թիրախային ոլորտում հանրային քաղաքականությունների և մշտադիտարկման իրականացում:

Ի՞նչ կշահի հանրությունը ծրագրից

- Հայաստանի քաղաքացիների համար կարևոր խնդիրների համար այնպիսի լուծումներ կգտնվեն, որոնք, ակնկալվում է, զգալի ազդեցություն կունենան մարդկանց կյանքի վրա:
- Քաղաքացիները կմասնակցեն խնդիրների վերհանման գործընթացին, ինչպես նաև կառաջնորդեն հանրային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացը՝ ուղղված խնդիրների լուծմանը: